Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչությունում փորձագետ ներգրավելու մասին

Աշխատանքների համառոտ նկարագրությունը՝

ա) Իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Մարզպետին վերապահված լիազորությունների իրականացման կազմակերպումը.

բ) Իրականացնել աջակցություն Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի **/այսուհետ՝ Մարզ/Սևանի տարածքի/այսուհետ՝ Տարածք/** արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառների պետական կառավարման համակարգի մարմնի տարածքային ստորաբաժանման ղեկավարին տրված հանձնարարականների կատարման աշխատանքներին.

գ) Իրականացնել աջակցություն Մարզի տարածքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման աշխատանքներին.

դ) Իրականացնել աջակցություն Մարզի տարածքում համապատասխան մարզային ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, տարերային և տեխնածին աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ կատարվող աշխատանքներին.

ե) Իրականացնել աշխատանքներ որպեսզի Մարզի բնակչությունը ներգրավվի քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման, տարերային և տեխնածին աղետների հետևանքների վերացման աշխատանքներին.

զ) Իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինների և բնակչության հետ պետական կառավարման համակարգի այլ մարմինների տարածքային ստորաբաժանումների համագործակցությունը.

է) Մասնակցել Մարզի բնակչության տարահանման պլանների մշակման աշխատանքներին.

ը) Մարզում այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնող քաղաքացիների վերաբերյալ լիազոր մարմնի պահանջով իրականացնել տեղեկատվության ներկայացում.

թ) Իրականացնել աջակցություն Մարզի զինապարտների հաշվառման, զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպման ուղղությամբ տարվող աշխատանքներին.

ժ) Մարզի համայնքների աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կատարման վերաբերյալ իրականացնել տեղեկատվության ներկայացում լիազոր մարմնին.

ի) Իրականացնել պետական կառավարման համակարգի մարմիններից, համայնքապետարաններից ստացված գրությունների, քաղաքացիների դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկումը և դրանցից բխող աշխատանքների կազմակերպումը:

Փորձագետ ներգրավելու ժամկետը՝6 (վեց) ամիս:

1. Փորձագետի աշխատավարձը կազմում է՝ **267,072 (երկու հարյուր վաթսունյոթ հազար յոթանասուներկու) ՀՀ դրամ:**

Փորձագետի պարտականությունները՝

1. Բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքները.
2. Սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել փորձագետի աշխատանքների ծրագրով նախատեսված հաշվետվությունները, վերլուծություններն ու տեղեկանքները.
3. Պահպանել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը.
4. Պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները.
5. Իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները.

Փորձագետին ներկայացվող պահանջները՝

1) Բարձրագույն կրթություն.
2) Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տարածքային կառավարման բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ.
3) Հաշվետվությունների և այլ փաստաթղթերի հետ աշխատելու փորձ.
4) Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
5) Տիրապետում է ռուսերեն կամ անգլերեն լեզուներին:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում **(դիմումի ձևը կցվում է).**
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթուղթ (փաստաթղթեր).

- աշխատանքային գրքույկ (գրքույկի բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ կամ այլ փաստաթուղթ/եր համապատասխան մարմնից/ներից).
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական, կամ համապատասխան տեղեկանք.
- մեկ լուսանկար՝ 3 x 4 սմ չափսի.
- անձնագիր կամ նույնականացման քարտ.
- սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ ունենալու մասին տեղեկանք.
- ինքնակենսագրություն.
- հայտարարություն ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին **(հայտարարության ձևը կցվում է):**

Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից ընտրություն կատարելու եղանակներն են՝

- դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն.
- հարցազրույց:

Քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են պատճենների հետ միաժամանակ՝ **անձամբ:**
Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 08.05.2026թ.

Փաստաթղթերն ընդունվում են միայն աշխատանքային օրերին՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, 14.00-ից 15.00-ն:

Աշխատանքի վայրը՝ ՀՀ, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
ՀՀ քաղաքացիները տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար կարող են դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ, անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժին՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, հեռ.՝ 060650626:

05.05.2026թ